

Ի՞նչ կասէիք անգլիացիներին
կամ գերմանացիներին մասին, որոնք
զետեղվելով Աֆրիկայի կամ Ա-
սորալիայի երկիրներէն մինի մէջ
այնտեղ կ'օգնեաներ հիմնելով և
դարերով բնակվելով տեղական
վայրերի ցեղերի մէջ ընդունակ
չը լինէին այդ անկիրթ ցեղերին
ոչինչ սովորեցնելու, նրանց կեան-
քը աստանդականից հաստատա-
բնակ դարձնելու, հետզհետէ նը-
րանց մէջ խելացի երկրագործու-
թիւն և տնտեսագիտութիւն մտ-
ցնելու, նրանց նոր սերունդի հա-
մար դպրոցներ իրագործելու, —
անշուշտ դուք կասէիք որ այդ
անգլիացիները կամ գերմանացիները
արժանի չեն իրանց կոչման...

Նոյնը կարող ենք ասել և մեր
անդրկովկասեան քրիստոնեաների,
հայերի ու վրացիների մասին:
Հարկը տարիներով ապրում ենք
մենք մահմետական ազգաբնակու-
թեան մէջ և ոչինչ կուլտուրա-
կան ներգործութիւն չը կարողա-
ցանք նրանց վրա ունենալ:

Բայց դորանով մենք ինքներս
մեզ փաստում ենք, որովհետեւ ըս-
տիպված ենք ապրել անշարժ և
իր տղիտութեամբ ու մոլեռանդու-
թեամբ ամեն առաջադիմութեան,
ուրեմն և մեզ թշնամի տարրի
մէջ:

Մինչև երբ մենք չենք հոգայ
մեր հարեանների մասին: Չը մո-
ռանանք որ հոգալով նրանց մա-
սին, մենք գլխաւորապէս հո-
գում ենք և մեր մասին:

Գոնէ լոկ եսական զգացմուն-
քը ընդունենք մեզ համար որպէս
դրդիչ և ուղեցոյց լայն մարդա-
սիրական նպատակների և այդ-
պիսով հասնենք որ և է կուլտու-
րական ներգործութեան մեզ շը-
ջապատող կիսավայրենի և դարե-
րով անշարժ մնացած ցեղերի
վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԻՆ

Կ. Պօլսի «Մասիս» լրագրի հոկտեմբերի 13-ի
համարի մէջ տպվեցաւ մի նամակ Թիֆլիսից, երե-
ւում է որ այդ նամակի գրողը մի համբակ է,
իսկ կիսակիրթ համակները միշտ յանդուգն են
լինում: Կ. Պօլսի հայերը առհասարակ վիրաւոր-
վում են, երբ նրանց հոգոս են կանչում, բայց
Կ. Պօլսի «Մասիս» լրագիրը տպելով այդ տեսակ
նամակ, ապացուցել է, որ ինքն հոսոս է: Թող
մեզ ասեն, այդ բանին մենք սովոր ենք. բայց
ինչ կը նշանակի փողոցային լուրերին հաւատ
ըն-
ծայել և հաղորդել այդ տեսակ վայր ի վերջոյ լու-
րերը մի լրագրին որպէս հաստատ իրողութիւն:

Թիֆլիսի մի ստորակ տարածված է երեխա-
ների մէջ բողոքացաւ հիւանդութիւնը: Այդ հի-

ւանդութեան մեծ մասամբ զոհվում են 6—10
տարեկան երեխաները:

Մեզ գրում են ՄԵՂՂԻ գիւղից. «Սորանից եր-
կու շաբաթ առաջ Մեղղիի մօտ գտնված Շիվա-
նիձօր գիւղից մի հայ աղջիկ են փախցրել և տա-
րիկ են Պարսկաստանի Թիւրք—Գիւղը մի թուրքի
համար»:

ՄԵՂՂԻԻՅ մեզ հաղորդում են, որ այնտեղ մի
նոր հիւանդութիւն է յայտնվել պօղոս ու ոյց
անունով, որ իր զոհին սպանում է 10 օրով
մէջ: Այդ հիւանդութիւնը վարակւող է: Հարկա-
ւոր ենք համարում աւելացնել, որ Մեղղի գիւղը
գտնվում է Պարսկաստանի սահմանի վրա, Արաքս
գետի ձախ ափի վրա:

«Тифл. Вѣстн.» լրագրի խմբագրութեան միջո-
ցով ստացանք յօդուտ «Արարատեան» ընկերու-
թեան իշխ. Մ. Կ. Թումանովից 2 ր. 96 Կ. (թը-
թխադրում տարած) և Յակոբ Զուգարովից 10 ր.
4 Կ., ընդամենը 13 րոպէ:

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՅ: «Ուսումնական
տարին սկսվում է սեպտեմբեր ամսից, այսօր հոկ-
տեմբերի 15 է, բայց Գետաշէնի և Չարդախլուի
դպրոցները ուսուցիչ չունեն: Մեծապատիւ թե-
մական վերատեսչի հեռագրի գորութեամբ Ստեփան
Տէր-Մկրտչեանց նշանակվել է Փեր գիւղի դպրոցի
ուսուցիչ 360 ր. տարեկան ուսճիկով, այն էլ
ուսճիկ շատութեան պատճառով հասարակութիւնը
գիտաբանում է ընդունել, ուստի այն էլ մինչ ցարդ
փակ է մնում: Երբ մեր ժողովուրդը այնքան դար-
գացած էր եղի, որ տեղի ուսումնարանները հե-
ռագրով էին կարգադրվել, դուք է այն ժամանակը
թեմական վերատեսչութիւնն էլ մի աւելորդ բան
համարվեց:

Մեզ հաղորդում են ՕՐԳՈՒԲԱՒԻՅ որ տեղա-
կան պոլիցիական վարչութիւնը այն տեղացի մի
թուրքի մօտ մեքենաներ է գտել, որով թուրքը
չինում է եղել արծաթէ կեղծ րուբլիանոցներ,
ուստաց նոր 20 կոպէկանոցներ և պարսից դրան-
ներ: Այժմ թուրքը կաշառարկված է: Խօսում են
որ մեքենաները ուրիշ տեղից չեն բերված, այլ
չինված են նոյն իսկ Օրդուբադում:

Մեզ հաղորդում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԻԻՅՈՒՅ որ
պ. Զախար Սուլխանով, որ շին-Նախիջևանի դա-
ւառապետի օգնական էր, շատ լաւ և բարեխղճա-
բար կատարում էր իր պաշտօնը, այժմ հե-
ռացել է Օրդուբադից և շին-Նախիջևանի դաւա-
ռապետի պաշտօնն է ստացել: Հասարակութիւնը
թէպէս և ուրախ է, որ պ. Սուլխանով աւելի
բարձր պաշտօն է ստացել, բայց մի և նոյն ժամա-
նակ սաստիկ ցաւում է, որ կորցրել է մի շատ
բարեխղճ կառավարիչ, որին շատ քչերը միայն
կարող են նմանվել:

Ղազախի գաւառի ԿՈՂԻ գիւղի ծխատէր քա-
հանան ինդրում է մեզ յայտնել, որ այնտեղի ու-
սումնարանին հարկաւոր է մի ուսուցիչ, որ կարող
զանայ դաս տալ հայոց և ուստաց լեզուներ: Պայ-
մանների մասին կարելի է տեղեկանալ «Մշակի»
խմբագրատանը:

Մեզ հաղորդում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԻԻՅՈՒՅ որ
այնտեղ ցորենը սաստիկ թանկ է: Ցորենի պուրը
առաջ արժէր 40—50 Կ., իսկ այժմ երկու րուբլի
արժէ: Տեղական ուսումնարանում շատ քիչ աշա-
կերտներ են մնացել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՆԵՆՈՐԳՄՈՒՆԻՔ

Մայրաքաղաքիս գաղղեական Սթամպուլ
լրագիրն իւր հինգշաբթի աւուր թուրքն մէջ
հետեւեալ կարեւոր յօդուածը կը հրատարակէ
հայկական ինդրոյն վրա:

«Հայաստանի մէջ այնպէս զէպքերու վրա
խօսելէ ձեռնպահ եղած էինք բաւական եր-
կար ժամանակի ի վեր:

«Այս մասին մեր պահած լուրթիւնը սա
պատճառաւ էր թէ Ասիոյ սոյն մասին ժողո-
վրդոց և մանաւանդ Հայ ժողովրդեան, որ

ամենէն բազմաթիւ և ամենէն թշուառն է,
վիճակին բարեւոյն համար բարենորոգում
ներ գործադրելու պաշտօնով Քոմիսէները ղը-
կուած էին:

«Այդ Քոմիսէներուն մեկնած ժամանակ
քանի մ'անգամ դիտողութիւն ըրինք թէ ի-
րենց պաշտօնը բարձրացեալ արդիւնքներն յա-
ռաջ բերել կարենալու համար պէտք եղած
պայմանաց մէջ չէին գտնուէր Քոմիսէրը:

«Մասնաւորապէս պնդեցինք այս իրողու-
թեան վրա թէ Հայոց Պատրիարքարանին
կարծիքը պէտք էր հարցուէր: Այդ կողմէն
գալիք տեղեկութիւնք, գաւառաց մէջ պէտք
եղած տեղերը ձեռք առնուելիք միջոցներու
հիմունքը զննու կրնային օգնել:

«Ըստ մեզ հարկաւոր էր Պատրիարքարանին
հետ համաձայնել, որ այս մասին ամենաճիշտ
և ամենակատարեալ տեղեկութիւններ կրնար
տալ, և որ բոլոր Հայաստանի մէջ անդորրու-
թեան հաստատուիլը տեսնելու մասին զոնէ
նոյն իսկ կառավարութեան չափ շահ ունէր:

«Աւստի Քոմիսէրը մեկնեցան» ձեռք առնու-
միջոցներուն հիմունքն առաջուց չորոշուած:
«Անգամ մ'իրենց պաշտօնատեղին հասնելէ
ետեւ, Քոմիսէրը բաւական տաժանելի կու-
մ'ընել թուեցան քանի մը բարենորոգմանց
հաստատութեան, կամ աւելի ճիշդ խօսելով
քանի մը յանցաւորաց պատժուելուն համար:
«Վերջէրա շատ կարեւորութիւն տրուեցաւ,
մանաւանդ Պոլսեան մամլոյն մէջ, Քոմիսէր
Ապետին պէյի ձեռք առած մէկ միջոցին, որ
23 քիւրա գլուխներ, որք առ ն ու ա զ ն
հարկէր դատապարտութիւնը պատճառա-
բանող տեղեկագիրն, Ալպանիա քաղաքի մէջ
կը կայանար:

«Թէ և այդ անգամ ալ լուրթիւն պահեցինք,
այսուամենայնիւ մեր մտքն չը կրցնէր սա
դիտողութիւնը չընել թէ հարկէր աւելի
զիւր կողպտած կամ այրած լինելու համար
յանցաւոր ճանաչուած մարդիկ ստուգիւ բա-
զում բռնաբարութիւններ և սպանութիւններ
գործած և գործել տուած են: Արդ, եթէ
այս ոճրագործները մի միայն Սամանեան հոգի
վրայ քաղաքի դատապարտուած են, ի՞նչ պա-
տիժ կրել պիտի տան ուրեմն այնպիսի ան-
ձանց, որք մի ալ մէկ կամ երկու հոգի
սպանուած են:

«Աւստի մեզ այնպէս կը թուի թէ Ապետին
պէյին ցուցած կարճեցեալ ազդուութիւնն
ուշադրութեան կամ գովեստից արժանի բան
մը չունի:

«Բիտումը որ ոմանք կըսեն թէ Քիւրդերուն
քով վերջերս ծագած և տակաւին ծագող ա-
յլըստամբական շարժումները 23 գլուխներուն
աքտորման հետեւեցին եղան և են:

«Այս բանն հնար է, և միայն կապացուցա-
նէ թէ Քոմիսէրը խիստ թոյլ կերպիւ գոր-
ծած է:

«Քանի որ յիշեալ գլուխներն այդպիսի ոճիր-
ներով յանցաւոր ճանչուած էին, կայսերական
Քոմիսէրին պարտքն էր իւր հարկ տեսած
զինուորական զօրութիւնը խնդրել կառավա-
րութիւնէն, և անոնց ոճիրներուն իրապէս
արժան եղած պատիժը տալ:

«Այն պատիժներն առանց վարանման գոր-
ծադրուիլ պէտք էին, և այն ժամանակ յան-
ցաւորաց մեղաւորիցներն ու արբանակները
փրկարար ստիւում մը կը զգային:

«Բայց միայն քաղաքային պատիժն, որ յայտնի
է թէ քիչ ժամանակէն կրնայ ներուիլ Քիւր-
դերու քով ամեն վախ ազատ դժգոհութիւն
մը կրնար պատճառել:

«Ուրեմն Ապետին պէյին ձեռք առածին
նման միջոցներ Քիւրդերը կը դժգոհացնեն
առանց զոհացում տալու Հայոց:

«Աւստի, ի՞նչ տեսանք անի ի վեր:

«Քրիթէ բոլոր Հայաստանի մէջ, բուն Քիւր-
դասանայ մէջ և մինչև իսկ այն ամենէն վը-
տանգաւոր թափառիկ ցեղերու մէջ, որք

Միջադեպի կողմերը կը ձմերեն, աւելի կամ
նուազ ծանր ապստամբական փորձեր, որք սա-
կայն լաւ կը ցուցնեն անոնց ընդհանուր ձրգ-
տումը:

«Քիւրդերը կառավարութեան ըսել կը թը-
ւին թէ, «դուք Հայերը մեր հարստահարու-
թիւններէն ազատել կը թուիք, լաւ մեք թէ
Հայերն և թէ զձեզ պիտի ներդնք:

«Նւ բնականաբար այս ապստամբութիւննե-
րէն և այս վրէժխնդրութիւններէն ամենէն
աւելի փնտաւորներն Հայք են:

«Թուք լրագիր մը վերջին օրերս կըսէր թէ
Սալիսպլըրի մարքիզը բարենորոգմանց արդիւն-
քին նկատմամբ ապահով է:

«Մեք պէտք է եմքադրեմք որ եթէ աշխիւ
Լորտն այսպէս կը խորհի, դրական տեղեկու-
թեանց վրայ կը յենու, բայց միանգամայն
համոզուած եմք որ կէս միջոցներու կուսակից
պէտք չէ լինի:

«Անգղիոյ արտաքին գործոց նախարարը պէտք
է փափաքիլ որ Սամանեան իշխանութիւնն Ա-
սիական բոլոր գաւառաց մէջ զօրեղ և յար-
գուած լինի, և ասոր համար պէտք է որ Քիւր-
դերն զսպուին, և Հայք՝ որք իրապէս կրնան
Ներպական քաղաքակրթութիւնը թափանցել,
պաշտպանուին ու քաջաբերուին:

«Անգղիա երկար ժամանակէ ի վեր իւր օգ-
նութիւնը խոստացաւ Ասիոյ բարենորոգմանց
համար: Մինչև իսկ յունիս 4-ի դաշնագիրը
պարտաւորութիւններ կը սահմանէ իրեն հա-
մար, և պէտք է յուսալ որ զանոնք խցի
մտքը պիտի կատարէ:

«Երկար ժամանակէ ի վեր Փոքր-Ասիոյ մէջ
գործուած զեղծումները դադրեցնելու հա-
մար կայսերական կառավարութեան ունե-
ցած յօժարակամութիւնը բնաւ տարա-
կուսի ներքեւ չեմք զնեք: Քոմիսէրները զրկվիլը
սոյն յօժարակամութեան մէկ ապացոյցն է:
Բայց այդ պատուիրակաց մեկնած ժամանակ
մեր բրած դիտողութիւններն այսօր յիշիլ ա-
նօգուտ չը համարեցանք: Անկէց ի վեր ան-
ցածները մեզ իրաւունք տուին, և հետեւա-
բար կրնամք միանգամ ևս խնդրել կառավա-
րութեան որ Քիւրդերուն դէմ աւելի խիստ
միջոցներ ձեռք առնու: Գուռը մինչև ցարդ
զթութեամբ լի եղաւ անոնց համար, քաղց-
րութեամբ զանոնք ուղիղ ճանքան բերել յու-
սաց: Այսօր պէտք է ճանչն թէ ապերախ-
տութիւնէ զատ ուրիշ բան չէ շահած:

«Կառավարութիւնն երկրին մէջ բնազող
երկու տարրերը՝ Քիւրդերն ու Հայերը՝ խաղա-
ղութեամբ ապրեցնել կը ջանար:

«Այս փափաքելի լուծումը միշտ հնար է,
բայց՝ ըստ մեզ՝ գործածուելու միջոցներն
կախում ունին:

«Ապետին պէյին ձեռք առած միջոցը քննա-
դատեցինք, բայց վերջապէս անոր յանցանքն
ազդուութեան պակասութիւնն էր: Եթէ անցե-
լայն մէջ աւելի հեռին երթամք, առանց դը-
ժուարութեան կրնամք ապացուցանել թէ
կառավարութեան ուրիշ պաշտօնատարք ա-
ւելի ծանր յանցանքներ ունեցած են:

«Անոնց պաշտօնին թերութեան և կառավա-
րութեան դէմ ի գործ դնել համարձակած
խաբէութեանց առաջին հետեւեցը կառա-
վարութեան համար դժուարութեանց և
փնտսոց աւելնալն եղաւ:

«Աւստի նմանօրինակ դժբաղդութեանց նո-
րոգման առջին առնու համար՝ միանգամ
ևս կառավարութեան ուշադրութիւնը կը
հրաւիրեմք Ասիոյ միջանցած դարձուածոց վրա:

«Մեր պաշտօնը դժբաղդ և խորին համա-
կրութեան արժանի ժողովրդեան մը դատող
միայն պաշտպանել չէ, կառավարական իշխա-
նութեան սկզբունքն ևս պաշտպանել է,
սկզբունք՝ որ շատ պիտի տկարանայ եթէ
խիստ ազդու ընթացք մը չը բռնուի Քիւր-
դերուն դէմ, որոց ապստամբութիւնք իրենց
նկատմամբ ի գործ դրուած համբերութեան
համեմատ կրնան աճիլ»:

(Մասիս, սեպտ. 22)

«ՄԱՍԻՍ» 303-ՈՒԱՆԸ ՍԵՊՏ. 15-ԻՅ

Յրնուզի Վանահայր Գեր. Նիկողոս եպիսկոպոս. Թերձեմանը Եփեսոսի մէջ նամակ մը հրատարակելով կը հերքէ այն զրոյցը թէ Գեր. Հատունի կողմէն զաղանի առաջարկութիւն եղած է իրեն պապական վեղար գնելու հանդերձ հրապարակել խոստումներ: Չարմանալի է, որ Գեր. Հատուն հազիւ արտօրէն վերադարձած, Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ այսպիսի մեղքնայութեանց և դաւաճող գրոյցներ կը քննէ. բայց ամեն մարդ գիտէ որ անոր սկզբունքն է Հայաստանեայց եկեղեցին կործանել և իւր փառաւորութիւնն յաղթանակ հռոմի առջև, յորմէ զուցէ կարգինաւորութեան ծիրանի կը սպասէ՝ ի վարձ ազգային եկեղեցւոյ դէմ գործած դաւաճողութեանց: Մէք Գեր. Հատունն էն բնառ ուրիշ բան չեմք սպասեր, քանզի զինքն Հայաստանեայց եկեղեցւոյ անհաշտ թշնամի մը կը նկատուի, որ թէ և յայտնապէս չը լինի, բայց ամեն զաղանի միջոցը ներքին ևն իրեն: Միայն թէ պարզամտաց ազգաբարբութիւն մը տալու համար՝ կըսեմք թէ Պապականութիւնը չունի հիմն այն հրապարակելու, զորս ունէր ասկէջ 10-15 տարի առաջ:

Նախ Հայք պապականութիւն ընդունելով չեն կրնար համակրութիւն ստանալ եւրոպական կառավարութեանց կողմէ. քանզի պապական գրութիւնն ամեն երկրի մէջ ամենաճարտար կերպիւր կառավարութեանց իրաւունքը խլելու կը թեկնածէ, և այս պատճառաւ Գերմանիոյ, Դադղոյ և ուրիշ երկիրներու կառավարութիւնք պարտաւորուած են միշտ Վաթիկի կղերականաց հետ մաքաւել: Երկրորդ Հայաստանեայց եկեղեցին մինչև ցարդ անկախ մնացած է, և իրաւունք ունի քրիստոնէայ ազգաց մէջ իւր դիրքը պահելու, որով ոչ միայն Վաթիկի, այլ և Օրթոդոքս և և բողոքական ազգաց և տէրութեանց համակրութիւնը կրնայ փայլել: Մինչդեռ, եթէ Վաթիկի լինէր, միայն Վատիկանու համակրութիւնը պիտի գրաւէր, որ այսօրուան օրս բնառ նշանակութիւն չունի: Ուստի եթէ Հայոց Պատրիարքը միշտ ազգու ընթացք մը բռնէ, անկարելի է որ Վաթիկի Պատրիարք մ'իրեն աւելի ազդեցութիւն ունենայ: Նոյն իսկ Դադղոս, Բատրիա և Աւստրիա, թէպէտ կրնան Վաթիկի, բայց բոլորովն աշխարհական տէրութիւններ են: Այսօրուան օրս Դադղոյ առաջին նախարար Պ. Վատիկիին դաւանութեամբ բողոքական է, հասարակային կրթութեան նախարար Պ. Թիւլ-Ֆէրի կղերական դաստիարակութեան դէմ է, և հանրապետութեան նախագահ Պ. Թիւլ-Կէօքի հաստատաւոր ազատական մ'է: Հետեւաբար այսպիսի անձինք առաւել համակիր կրնան լինիլ անկախ եկեղեցւոյ մը, որ քրիստոնէական նախկին պարզութիւնը պահած է, քան թէ պապական անսխալականութիւնը, Սիլվապիւսը, և Վատիկանու ժողովին նոր վարդապետութիւններն, ընդունող եկեղեցւոյ մը, վարդապետութիւններ որոց նպատակն է ներկայ քաղաքակրթութիւնն հիմնադրող ընել: Երրորդ՝ Թուրքիոյ Հայերը Վաթիկիութեան դաւանաւոր կը կորուսանեն նաեւ: Վաթիկան մէկ միլիոնի չափ աշխոյժ ազգայնոց համակրութիւնը: Վերջապէս իրենց եկեղեցական անկախութիւնը ու ազատութիւնը տալով Հայք ինչ կը շահին, բայց եթէ պապական նուստացուցիչ թէ լուծը, զոր կաթոլիկ ազգայինք տան Գարիէ աւելի ճգնելէ ետեւ՝ անկարող եղան թօթափել:

Այս խորհրդածութիւնն մի անգամ ընդ միշտ կը ներկայանայ պարզամտաց և դամկաջ եթէ կան աչքը բանալու համար: Բարեբաղդաբար մամուլն ու դպրոցները բաւական լուսաւորեցին Հայ ժողովուրդին իւր ճշմարիտ շահոյց վրայ, որը ոչ պապականութեան, ոչ ալ բողոքականութեան մէջ էին, այլ ազգային եկեղեցւոյ: Վստահ եմք ուրեմն որ ամեն դա-

դանի մեքենայութիւնը անգոր ևն բաժանուած ձգելու, ինչպէս կը տեսնուի Յրնուզի վանահայր հրապարակային յայտարարութենէն:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Եւզովիա, 2/14 հոկտ.

Քարերդի և Տիգրանակերտի (Կարբէրքի) բաւարարող քովտէր Ալէքսանդր-Ֆաշան որ այդ պաշտօն իւր վրայ պահելով, Սերաստիայի (Սիւլա) նահանգապետ եղած է այժմ, Քարբէրդէն հրաման զրկեց Եւզովիայ (Թարսի) կառավարութեան մի տեսակ նոր ժողով կազմել ճէմաւաթ մէջիսի (ժողովրդական ժողով) անուն որոյ կէսը թիւրքերէն պիտի ընտրուի, կէսն ալ լուսաւորչական հայերէն, հռոմէական հայերէն, հրէայերէն և յոյներէն, իւրաքանչիւր հասարակութենէն մի անձ: Այս ժողովը պիտի հանէ մէջիսիներու կալուածներուն, փակեցներուն, եկեղեցիներուն և վանքերու կալուածներուն մատակարարութիւնը դարձնէ ի վեր ազգէն կախում ունենալով բացարձակապէս, չենք հասկնար թէ այդ ժողովը քնն քանի վրայ պիտի հանէ: Մեր նորընտիր ազատամիտ նահանգապետը փոխանակ մեզի նոր ազատութիւններ տալու, արդեօք մեր ունեցածն ալ մեր ձեռքէն խլել մտադիր է: Ընդդէմ այսպէս եղաւ երբ Միտհաթ-փաշան ալ առաջին անգամ եպարքոս եղաւ. հայեր ուրբախացան որ մի ազատամիտ համարուած մարդ եպարքոսի պաշտօն ստացաւ, բայց Միտհաթ իւր եպարքոսութեան նոյն իսկ առաջին օրերն ազգաբարբութիւն մի մի պատրիարքարանը քաղաքական խնդիրներու համար Բ. Գրքան թաւ գրի (յայտագիր) գրելու իրաւունք չունի. նա ուղեց մերձէ մեր ազգի դարաւոր իրաւունքը: Այնու ամենայնիւ, թիւրքաց փակեցներուն համար մի պղպղատ ժողով կազմելը շատ հարկաւոր է և տէրութեան դանձին օգտակար: Վաթիկիները մէջիսիներու սեփականութիւն համարուած կալուածներ են, կալուածատէրները պարտաւոր են մի որոշեալ տուրք վճարել վաթիկի համար: Այդ հատկութիւնը մէջիսիներու յատկացած է և այս չունի շատ անգամ մի փաշայի կամ մի բարեպաշտ թիւրք ազգիւր կը շինէ կամ փողոցներն հասարակային արտաքնոյցներ (ճանիւղ) կը շինէ և որպէս զի այդ շինքերը հողագոյնի լինին կամ քանդուած ժամանակ վերանորոգուին, նոցա համար կալուածներ կը յատկացունէ, որոց եկամուտը մի սօֆիթ կամ մի որ և ինչ ազդեցութիւն ունեցող թիւրք կը հաւաքէ և իւր ուղղման պէս կը դործածէ: Այսպէս մէջիսիներու նուիրուած շատ կալուածներ զանազան անձերու ձեռով կը կառավարուին: Ամբողջական մեծնորդներու կալուածներն ալ վաթիկի սեփականութիւն կը դառնան, որով վաթիկիները մեծազոր մար հաւաքում ունեցած են: Կառավարութիւնը կը ջանայ այժմ այդ վաթիկիներու մատակարարութիւնը մասնաւորներու ձեռքէն կորցնելով իրեն սեփականել, բայց շատ դժուար յաջողի, զի բազմաթիւ թիւրքեր կան որ ոչ աւր հետո գիտեն, ոչ ալ փաճառականութիւն և պղպղատի բարեպաշտական հաստատութեանց միւլ թէ վէլի (հողաբարձու) եղած, նոցա եկամուտներով կապին, ուրիշ ոչինչ աշխատութիւն չունին և չեն ալ սիրեր աշխատել:

Թիւրք լրագիրները և մեր լրագիրներէ մի քանին ալ գովաւորներ հրատարակեցին Ալէքսանդր-Ֆաշանի վրայ թէ Տիգրանակերտի մէջ մեծ բարեկարգութիւններ արել է: Բայց ինչ են իւր արածները. բազմաթիւ հարստահարողներէն և ժողովրդեան զրգուիչ չէյիսերէն մի քանին Ալեքսանդր արտօրել ուրջած է: Բայց ո՞վ գիտէ թէ Ալէքսանդր-Ֆաշան ինչպէս չէ դարձած այդ արտօրելը չէյիսերուն հետ: Նա յատուկ նպատակով կուզարկէ Ալեքսանդր որ այնտեղի մասնատակները զրգուիչ յոյներուն դէմ: Պէտք չէ մոռնալ որ Ալէքսանդր-Ֆաշան ալաւանական միութեան գաղտնի ամենապաշտպաններէն մին էր: Այսպէս եղած ժամանակ: Այսպէս, երբ կայսերական քովտէրը ոչ թէ խստութեամբ վարուած, այլ խորհրդակից եղած կը լինի քրիստոնէից հարստահարողներուն հետ, տարակոյտ չը կայ որ Տիգրանակերտի կողմէրը մնացած չէյիսերն և քիւրդ բէկերն աւելի ևն քաջաբերութեամբ կը լինին: Արդէն եղելութիւններն այլ հետզհետէ այս կարծիքն կը հաստատեն. հարստահարութիւնները չեն դադարել, այլ կը շարունակեն: Մենք բնառ յոյս չունենք Բ. Գրքան զրկած բարեկարգութիւններուն վրայ: Մինչև որ եւրոպացիներէ և հայերէ կազմուած

խառն յանձնաժողով մը չը գայ Հայաստան, բարեկարգութիւններ կարելի չէ որ զործադրուին: Այնպիսի կառավարութիւնն ալ դեռ ոչինչ յատուատ. բան արած չունի. իւր հիւստատուներ տեղական թիւրք կառավարութիւններուն երբեմն բարեկարգութեան յորդանակ տալէն ուրիշ բան չեն անել: Այդ յորդանակն ալ շատ թույլ կերպով կը լինին, այնպէս որ բնառ ազդեցութիւն չեն ունենում: Կառավարութեան վրայ: Սերաստիայի մէջ անգամ որ անգլիական ընդհանուր հիւստատուութեան կենտրոն է, ամենին ու և և փոփոխութիւն չէ եղած. հարստահարութիւններ, զրգուիչներ, բարեկարգութիւններ, ամեն անփառութիւններ, որպէս յատաճ նոյնպէս և այժմ կը շարունակուին. տեղական թիւրք կառավարութիւնը ամենին կառավարութիւն տուած չէ հիւստատուին և թէ և նորա մօտ կը քծնի և կը շողորթի, բայց երբեք չը փոխէր իւր կողմնակալ ընթացքը և կը շարունակէ կաշառակերութիւնները: Ընդհանուր հիւստատու գնդապետ պ. Վիլսոն սեպտ. 15-ին եկաւ Եւզովիա և երկու օր այստեղ կենտրոն դնաց Ամասիա: Իւր հետ էր թարգմանը պ. Պոլի որ լաւական եռանդուն մի երիտասարդ է չէկ մադրով և բաւական կրնայ խօսել թիւրքերէն: Պ. Վիլսոն 55—60 տարեկան կայ. մազերը սպիտակ են, դէմքը կնճռոտած. մի պողպարին հրամանատար կերել քան թէ քաջ զինուոր. իւր թարգմանին հետ խօսած ժամանակ, կարծես թէ բաւերը կը թափվի թիւրքերէն, շատ ցած ձայնով կը խօսի: Թէ թիւրք և թէ հայ հիւրեր ընդունած ժամանակ զըլուր բանալու քաղաքակրթութիւնը չունէր միշտ գլխարկով ծածկած կը կենար. հիւր ընդունած կամ ճանապարհ դրած ժամանակ ոտքի վրայ կենէր և թիւրքական ձեռով բարեկ (թէմնիս) կանէր: Գուցէ պ. Վիլսոն ճաղատ (քաջալ) է և այդ պատճառով զուրկ չէր բանար միջնաւ իւր թարգմանը միշտ գլխարկը կը մնար: Կասնի թէ պ. Վիլսոն Փրանսիոյն և գերմանիոյն ալ գիտէ, բայց իրեն հետ այդ լեզուներով խօսողներուն չը պատասխանէ նոյն լեզուներով. այլ իրեն չը հասկացող իւր թարգմանին միջոցով ուղեց խօսել: Անգղերէն խօսողներուն անգղերէն կը պատասխանէր առանց իւր թարգմանի միջնորդութեան: Թիւրքերէն բնառ չը գիտէր: Իրեն այցելող թէ հայերուն և թէ թիւրքերուն հարցումներ անկողի տեղեկութիւններ տալու, բայց ինքն իւր կողմէն ոչինչ յուսարկական բան չը խօսեցաւ. գուցէ ինք ալ յուսահատ է թիւրքաց ձեռքով բարեկարգութիւնը զործադրուելէն: Եթէ անգլիական հիւստատուները այսպէս պողպարին մարդեր լինին ընդհանրապէս, չիմ յուսար որ ռուսական հիւստատուներուն հետ մրցել կարնան և այստեղի ժողովրդոց համակրութիւնը աւելի դառնան: Այս կողմի հայերու հետ զործ ունեցողները պէտք է որ աւելի եռանդուն, տաքարիւն լինեն և արեւելեան քաղաքակրթութեան պահանջները փոքր ի շատէ հասկանան:

Օտարներու վրայ խօսած ժամանակ, չը մոռնալ մեր ազգի վրայ ալ աչք դարձունել, պէտք է խոստովանել որ մերն ալ խիտ մեծ թիւրքութիւններ ունենք: Մեր ազգային փոքրիկ գործերն անգամ լաւ չենք կառավարել, միջնաւ աւելի բարձր իշխանութիւն ունենալու փափաք կը յայտնենք: Սերաստիայի պէս ընդարձակ և հայաշատ վիճակը Պետրոս եպիսկոպոսի նման մի անպիտանի ձեռք անցած է որ թող բնաւորութեան տէր, տգէտ, բայց իւր վրայ մեծ համարում ունեցող մի մարդ է, հին գաղափարներով դուրսը լցուած: Ոչ մի օրինաւոր վարժարան չէ դնացած. Ս. Նշանի վանքին մէջ իւր նման տղան մի եպիսկոպոսի մօտ փոքրաւորութիւն անելով վարդապետ ձեռնադրուած է: Անցած տարի ալ Եւթիմիոսի գնաց եպիսկոպոս ձեռնադրուելու, սերաստիայից ընդունուի: Այս պէս առաջնորդն է որ Միհր-Ալի պէս մի բռնաւոր հարստահարիչը Սերաստիայի մէջ բնակեցունելու և արքայի չը տալու համար տեղական կառավարութիւնն Բ. Գուրը զրկուած խնդրազրկ ստորագրած է. Կարապետ. եպիսկոպոսին 1000 օսմ. ոսկի կտալը դեռ անգործադրելի թողած է. մինչև ցարդ մի օրինաւոր հաշիւ չէ ներկայացուցած. ազգի գրամարմինը քնն կը լինին, յայտնի չէ. որբերու և խեղճ դիւղացիներու փողերը խաբէութեամբ կուրորն անցուցած է, կասն: Ազգային ժողովները բոլորովն անգործութեան դատապարտուած են: Սերաստիայի Տ. Գարբիէլ քահանայն ալ երկու տարիի չափ յատաճ Տիգրիս, Բաղու, Գալիէի և այլն պարտելով, փողեր հաւաքել է եղբի Սերաստիայի վարժարանին անունով, բայց երբ Սերաստիայ վերադարձաւ, ոչինչ չը յայտնեց առաջնորդին, կամ թէ առաջնորդը և ինք միայն գիտցան այդ բանը: Պ. Մ. փարթաւաբեկն որ Թիֆլիսի մէջ այդ քահանային

հանգանակութիւն արած լինելը գիտէ եղբի, անցած տարի երբ այստեղէն անցնելով Վան կերթար, ժողովուրդին յայտնեց. քահանայն նախ ուրացաւ, յետոյ ստիպուեցաւ խոստովանել, բայց առարկելով թէ ինք ճանապարհի ծախքեր ունեցած է և թէ ինք ալ ազգասիր է (մինչդեռ բաւական հարուստ է), 2000 ռուբլի չափ կարծուած գումարին փոխարէն 700 ռուբլի պարտաւոր հակ առին քահանայէն, առաջնորդին միջնորդութեամբ: Այնպէս թէ Տ. Գարբիէլ քահանայն «Փորձի» խմբագրատունէն ալ գրքեր նուէր տուած է զորս խրաջուցած է այժմ:

Ճամանակը եկած է որ մեր ազգային առաջնորդութիւններն ալ բարեկարգելու ձեռնարկենք. ***

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, հոկտեմբերի 18-ին, հինգշաբթի օր, Արծրունու թատրոնում, Թիֆլիսի խաղական օպերայի նախկին երգիչ (բարիտոն), պ. Ջիւստի տալու է մի կոնցերտ, մասնաւորութեամբ արկին Գէ. Կէր-Շէնիկի և իշխանուհու լեզուակերպի: Կը մասնակցեն նոյնպէս պ. պ. Տուրքի, Գէ. Կէր-Շէնիկ, Բուրնո և Տուրքի: Վիզըր երեկոյան 8 ժամին:

«Մասիս» լրագրում կարդում ենք: «Անգլիական Times of India» լրագիրը կը գրէ թէ Աֆգանստանի էմիր Եսկուպ խան, հայազգի թարգման մը ունի եղբի և անգլիական լրագրաց դրածներն այդ հայազգին իրեն կը թարգմանէ եղբի: Ճամանակաւ Գէ. Կէր-Շէնիկի մէջ հայ գաղթականութիւն մը կար, և Եսկուպ խանին թարգմանն այդ գաղթականութիւնէն մնացած է եղբի: *

Յրանախան «Figaro» լրագրի թղթակիցը, պ. Շարլ Հանկիսիլէ, որ այժմ ԹԻՖԼԻՍԻՍԻՆ է և Փրանսիական լեզուի դաստաւորութիւն է անուր թէ կրթական պրոգրեսիւնայում և թէ մասնաւոր աներում, գիտաւորութիւն ունի, ինչպէս լուր մը, չափով մի հրապարակական դատախառութիւն աւանի Փրանսիոյն լեզուով: Նիւթը կը լինի ր օ մ ա ն ի պ ա տ մ ու թ ի ա ն վրայ:

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՅ
ՄԻՄԱ, 16 հոկտեմբերի: Զօրքերը, որոնք կանգնած են Կերատ-Գիլգայի կանցնեն այդտեղ ձեռքը: Կերատ-Գիլգայի կողմի երկիրնեւում խաղաղութիւն է տիրում: Նահանգապետը փակեցաւ ամրոցի մէջ: Տարայան և Անդարեան ցեղերի պետերը փախան գէպի Կարու: Գաղաքը պատրաստուի է պատերազմի Խառանկեւան և Գորիզերան ցեղերի դէմ՝ նրանց պատժելու համար:
ՄՕՍՍՍԻ, 16 հոկտեմբերի: Հերցեգովինեան յեղափոխիչ (ազիտատոր) Սպաիչ, բունկցուաւստրիական ժանդարմներով:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ. 25 կ., երկրորդ 93 ռ. 50 կ., երրորդ 93 ռ. 25 կ., չորրորդ 93 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 229 ռ. 50 կ., երկրորդ 224 ռ. 50 կ., արեւելեան առաջինը 90 ռ. 62 1/2 կ., երկրորդ 90 ռ. 75 կ., երրորդ 91 ռ.: Ռուսաց 1 ռուբլ. 1 ծոգոնի վրայ արժէ 25,56 պէնս, ռուսաց 100 ռուբլ. Գերմանիայի վրայ 217 մարկ 50 պփ., Փարիզի վրայ 269 ֆրանկ, 75 սանտիմ: Բօրայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ՍԵՐԳԵՅԵՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՋԱՐ. ԳԻՐԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԱԿԱՆԱՆ ԳՐԱՎԱՆ	
ձԱՌԱՆՈՑՔ՝ ստացել է	
1 Սրբանձառանց-ՓՈՐՈՍ ԱՂԲԱՐ 1 ր. 25 Կ.	
2 Ս. Մանգինեանց-ԿՐՈՆԻ ԶՈՒ ԳԵՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆ 1 ր. —	
3 Բժիշկ Ա. Բաբայանց ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ր. —	
4 Ա. Բաճարեանց-ՔԵՐԱԿԱՆ ՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԼԵՋՈՒԻ — 25 Կ.	
5 Երկաթի ԳԻՄԱԿՈՎ ՄԱՐԿԵՆ ԱԻՆՏԻՔ ՊԱՏՐԱՐԻ ՀԱՅՈՑ 1 ր. —	
6 Յ. Նիշանեանի-ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՌԱՔՈՒՄՆ Ա. 1 ր. 15 Կ.	
7 Փարոս 1879 — — — Թ. 1 ր. —	

ՆԵՐՈՂԱՑՈՍ ՏԵՐ-ՂԵՆԻՆԵԱՆԸ խնդրում է այն անձանց, որոնք իրան հետ զբաղվում են իրան օժանդակելու իրանց մասնաւոր նամակներն ուղղել դէպի Երևան, ուր նա այս տարի պիտի մնայ ուսուցչական պաշտօնով, իսկ պատուէրները ըստ առաջնայն թող ուղղեն Կենտրոնական գրադատանոց, ուր ինքը պահպանում է իւր մասնակցութիւնը: Երևան քաղաքի և նորա շրջակայանների ուսումնարանների վարչութիւնները դիւրութեան համար, իրանց զբաղման պատուէրները կարող են ուղղել նոյնպէս և դէպի պ. Տէր Աւետեանը, որը կաշխատի ամենայն արագութեամբ կատարումն ապա նոյն պահանջներին: Յետոյ վճարելու պայմանով զբոսը ցանկացողները դիմում են ուղղակի գրադատանոց:

3—3

ԿՈՒԿԻՈՑ ՍՈՒՐԻ ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒՄՑ քաղաքում Մեծապատու Մ. ՄԻՐՁԱՑԱՆՑԻ Հիմնած ՏՂԱՅՈՑ ՀՈՒՆԻՐ ԾԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ Հոգաբարձութիւնը յայտնում է պատուելի հայ հասարակութեան, որ յիշեալ ուսումնարանի համար ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԿԵՆԻ ԼԵՋՈՒԻՆԸ սկսել է ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 15-ից: Ցանկացողը կարող են իրանց որդիքը ներկայացնել նոյն ուսումնարանում, Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ երեցփոխան պ. Բ. Փիլաղեանցին ամենայն օր մինչև առաւօտեան ժամը 9: Աշա-

կերտաց տարիքը 12-ից մեծ և 7-ից փոքր պիտի չը լինեն: Ընդունելութիւնը տեւում է մինչև ներկայ հոկտեմբերի վերջը: 2—3

ՎԱՐՁՈՎ ՏՐԱՎՈՒՄ ԵՆ ՍԵՆՏԱԿՆԵՐ Կարս-սիւրբ սամովարով և ծառայով, Երևանեան հրապարակի վրա ՅՈՒՐԻՆՈՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ մէջ, Տէր-Աստուածով տան մօտ: Հարցնել Պ. ՎԱՐԿԱՆՆԱՆԻՆ: 2—3

ՁԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԵԻԵՆԻ ՄԵՔԵԼԵՐ ԶԻԹԻՑ, որ պատրաստված է Մօսկվայի դեղագործ:

ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ

Գիւցի փրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները գրգեցին ինձ պարապել նրանց արդիւնադործութեամբ և որովհետեւ պատիճների պատրաստելը գաղաւթի է և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Չիլիից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖԻՆՆՍԻԱՆՆԵՐ (ԳԻԻՕՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էփան:

Յոյս ունեմ, որ ուսւ բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետեւ նորա առիթ չունեն ուսաց փողերով պահպանել ԵՐՏԱՆԱՆՆԵՐ ԵՐԻՒՆԵԼԻՑԻՆԵՐԻՆԵՐԻ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատոնները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մօսկվայում, Սանկտ-Պետերսբուրգում, Կիւրսկի վրա: Թիֆլիսում, Զուրիկովի և Բաթումի դեղատոն:

24—25

Կենտրոնական Գրադատանոցում, Գիւցի փողերով փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյու մի վաճառում են հետեւեալ նոր գրքերը:

1. Կարմիր լապտեր, փողերի մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. Գ. — Բ. 50 Կ.
2. — նոյնը առանց կազմի. — — 30 Կ.
3. Փառամաղ մեղու փողերի մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած. — — 40 Կ.
4. Ներայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մանրեանի պատկերազարդ. — — 30 Կ.
5. Հսկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մանրեանի, պատկերազարդ. — — 10 Կ.
6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար. 1 — Կ.
7. Փորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձառանց. 1 — 25 Կ.
8. Երկունք իններորդ դարու. գործ Մերկեյն. 1 — Կ.
9. Պատանեկան ներշնչանքներ, գործ. Հրանտ Ասատուրի. — — 60 Կ.
10. Մի կաթիլ արտօր, գործ հեղու. Միսակ հայ մեղիկի վրայ. — — 35 Կ.
11. Սամ Էլ Մուրատեանի կտակի ինքիւր, դաստիարակութիւն Ս. Արծրունու. — — 50 Կ.
12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայանի. 1 — Կ.
13. Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատին. րենից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանի. 1 — Կ.
14. Կրօնք. հոգեբանական հետազոտութիւն Ս. Մանրեանի. 1 — Կ.
15. Հայկական թատրոն. Վուլքի իմ վեճեր, փարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանի. — — 40 Կ.
16. Բերք բիճու համալը. Օպերետ մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի. — — 25 Կ.
17. Աշխատանք երեկոյ դիւղում, փողով մէկ արարածով, փոխադրութիւն Գ. Նահուրաբեանի. — — 25 Կ.
18. Բռնի ամուսնութիւն. կոմիդիայ մէկ արարածով, Թարգ. Գ. Զմէկեանի. — — 40 Կ.
19. Ժանս և Ժանէտ Օպերա-փողով, Թարգ. Գ. Նահուրաբեանի. — — 40 Կ.
20. Պէպո. կոմիդիա երեք արարածով, գործ. Գ. Սուրբուկեանի. — — 30 Կ.
21. Պառաւանքի խաղ. փողով մէկ արարածով Մ. Տէր Գրիգորեանի. — — 50 Կ.

Նոյն տեղը վաճառում են ամենայն տեսակի դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և Գաղերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և դիտութեան զանազան ճիւղերի վերաբերյալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարապաշտօններ իրանց պահանջները պէտքէ ուղարկեն հետեւեալ հասցեով „Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“

6—10 (2)

ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 18		Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց		ԹԻՖԼԻՍ 1879	
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 17-ին)	Բ.	Կ.	ՀԵՌԱԳԻՐ	ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻ	Փ Օ Ս Ց
Ոսկին (պողոնայիւրալը)	8	15		Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամ մին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայիլովօ (խուռն գնացքը) երկուրորդ 5 ժամ. 18 րոպէ:	Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից ընտոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երկուրորդ:
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—	Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . . 1	Թիֆլիսից . . . 9. 21	Առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից ընտոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երկուրորդ:
Հին 20 Կ. 72 պր. 1000 մ.	1245	—	Ռուսաստան . . . 2	Գորի . . . 11. 58	Ռուսաստանից և Արաւստանից փոստ ստացվում է թիֆլիսում ամեն օր: Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Վերջինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 մ.	235	—	Աւստրիա . . . 3	Միխայիլով . . . 5. 39	Բաց նամակ արծէ . . . 2
Ներկորդ 5% վերջինի . . .	230	—	Անգլիա . . . 4	Գորի . . . 7. 5	Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Մարտի կուրսը 270 —	100	—	Գերմանիա . . . 2	Թիֆլիս . . . 9. 40	Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Լոնդոնի կուրսը Օղեսայի վրա . . .	9	45	Ֆրանսիա . . . 3		Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Վենայի կուրսը արծ. 121 Գ.	100	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Գարսի բարաթը . . .	4	80			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . .	310	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Փոթի թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ. . .	—	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Շաբաթը բրոցիւր . . .	7	30			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Միւս տեսակը . . .	7	15			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Շաբաթ աւաղը . . .	5	30			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Մարադիւր . . .	5	30			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Մարքսի վառած . . .	10	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Բաժնակը Երևանու Ա. մերկայի սերմից . . .	8	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Միւս տեսակը հին սերմից . . .	7	40			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Բուրգը թուր . . .	7	50			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Թարաքալի . . .	4	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Աւերը Շորաքալու . . .	2	20			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Երևանի . . .	—	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Գարին . . .	1	40			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Միւս ընտանայի (сгар.) . . .	12	40			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Մեծաքը Նուրիկայ . . .	180	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Կախիլ ունը . . .	140	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Կոկոնը Նուրիկայ (բոս.) . . .	50	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Ֆրիզոնը (լաւը) Ագուլի . . .	65	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Կօֆէն մօկօ . . .	26	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Կ . . .	22	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ:
Մանտ ինյոն . . .	18	—			Ռուսաստան և Եւրոպայից Բաց Գ. Ե. Բ. արակ-տից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսի և Երևանի երկաթուղուց ամեն օր: Նոյնտեղ արակ-տից չորեքշաբթի և կիրակի: Ինքիւրից արակտից երեքշաբթի և շաբաթ: